




Ս. ԿՅՈՒՐԵՂ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԹՈՒՂԹԸ ԱՌ ԿՈՍՏԱՆԴԻ ԿԱՅՍՐԻ ԽԱԶԻ ԵՐԵՎԱՆ ԱՌԹԻՎ*

Աստվածաւեր և բարեպաշտ Կոստանդ օգոստոսիառ թագավորին՝ Երուսաղեմի Կյուրեղ եպիսկոպոսին ողջոյն խնդալից:

Վայելուչ է որ ես քեզի ուղղեմ և դուն ընդունիս այս առաջին նամակը զոր Երուսաղեմն կգրեմ քու աստվածաւեր թագավորությանդ: Շողոմական խոսքերով չէ որ լեցված է ան, այլ աստվածատեսական իրողության մը ազդարարությամբ: Գեղեցիկ շարադրություն և ճարտասանական իմաստներ չէ որ կպարունակե ան, այլ սուրբ ավետարանիչներեն կանխաձայնված և վկայված բաներու ճշմարտությունը:

Ծառեր իրենց ունեցած պեսպես թանկագին և շողշողուն քարերով կազմված ոսկեհոտ պսակներով կփառավորեն քու պատվական գլուխդ. իսկ մենք ոչ թե երկրեն

հանված բաներով կուզենք պսակել զքեզ, վասնզի երկրավոր ընծայաբերումները երկիրը միայն կունենան իրենց նպատակ, այլ քու աստվածաւեր թագավորությանդ օրով հոս Երուսաղեմի մեջ տեղի ունեցած աստվածային զորության գործերը կփութանք իմացնել քու բարեպաշտությանդ: Ոչ թե՝ որպեսզի անգիտութենէ աստվածագիտության գաս—ինչու որ դուն արդեն քու բարեպաշտությամբդ ուրիշներուն կտրվեցնես այդ մասին—այլ որպեսզի քու գիտցած բաներուդ մեջ ավելի հաստատվիս, և քու թագավորությանդ նախկին վիճակը հիշելով՝ երկնային պսակներով պատվվիս Աստուծոյ, և սորվիս ամենաթագավոր Աստուծո՝ իրեն վայելուչ շնորհակալություն մատուցանել, և,

* Խաչի երևման տոնը, հույնք կկատարեն մայիս 7-ին, իսկ մենք Հիմանց Ե կիրակիին: Այդ տոնակատարությունը հիշատակությունն է պարգապես խաչի նշանին երկնից վրա հրաշալի երևումին, որ 351-ին տեղի ունեցավ Երուսաղեմի վրա Գողգոթայեն մինչև Ջիթենյաց լեռ տարածված խաչանշան պաշտոությամբ մը, որ ավելի փայլուն էր քան արևուն լույսը: Զայն տեսան ամենքը, ժողովուրդ և կղեր, որոնք եկեղեցի փութալով գոհություն մատուցին Աստուծո, իրենց պարզևան այս հրաշալի միաթարության համար: Ժամանակին Երուսաղեմի պատրիարքը, Կյուրեղ, այս առթիվ հատուկ թուղթ մը գրեց Կոստանդ-

նուպոլսո Կոստանդ կայսեր, որ դատապարտված արիոսականությունը վերականգնելով եկեղեցվո ներքին խաղաղության դեմ մեծ վտանգ մը կպատրաստեր, և ողորդական քաղցր ոճով բայց խստադատ նկատողությամբ մատնանիշ կըներ անոր՝ իր հոր Մեծն Կոստանդիանոսի պաշտպանած դավանության ուղղափառ ճշմարտությունը, միևնույն ատեն այս երևելումեն ալ ապացույց մը հանել փորձելով այդ մասին: Այդ թուղթին թարգմանությունը կկարդացվի մեր եկեղեցվո մեջ, տոնին օրը, անդաստանի ավետարանեն առաջ («Սուրբք և տօնք», Երուսաղեմ, 1939, էջ 318—319):

թշնամիներուդ վրա մեծամեծ հաղթություններով քաջալերված, Աստուծո իրապես սիրելի ընծայես քու թագավորությունդ:

Ասո՛ր համար է որ Տերը քու օրովդ ալ ահա հրաշքներ կգործեն: Վասնզի, ինչպես որ քու աստվածասեր և երջանկահիշատակ հորդ, Կոստանդիանոսի ատեն, Աստուծո շնորհիվ Երուսաղեմի մեջ գտնվեցալ փրկարար խաչափայտը, ու սուրբ տեղերը իրենց մեջ ծածկված այն սրբությունը պարզեցին անոր որ սրտագին բարեպաշտությամբ փնտրեց զայն, նույնպես, քու օրովդ ալ, ո՛վ ամենաբարեպաշտ Տեր Թագավոր, Աստուծո երկյուղովը լեցված այն հին բարեպաշտությունը նորոգված ըլլալով, այս անգամ սակայն ոչ թե երկրի՝ այլ երկնքի վրա տեսնվեցալ հրաշքը, ու մեր Տեր Հիսուս Քրիստոս Փրկչին և Աստուծո Միածին Որդւոյն լուսանշույլ խաչը, որ մահվան դէմ հաղթության խորհրդանշանն է, ճառագայթափայլ երևեցալ Երուսաղեմի վրա: Որովհետև Պենտեկոստի այսինքն Հիմանց օրերուն, օրվան ժամը երեքին, ամենահաղթ խաչը, լույսով ձևացած, երկնքի վրա, սուրբ Գողգոթայեն մինչև Ջիթենյաց սուրբ լեռը երկարած կտեսնվեր ցոլացիկ: Ոչ թե միայն մեկ-երկու հոգիներու երեցալ անկկա, այլ ամբողջ սուրբ քաղաքիս ժողովուրդին. ոչ թե վաղանցուկ կերպով և առաչոք տեսլի պես, այլ երկար ատեն տեսնելով երկնքի վրա, ու իր բոցաճաճանչ փայլումովը արեւվուն ճառագայթներուն հաղթելով, վասնզի ինք պիտի հաղթահարվեր անոնցմէ, եթե արեգակեն ավելի զորավոր չցուցներ իր ճառագայթները: Այնպես որ ամենքը առհասարակ, սուրբ քաղաքիս ամբողջ բազմությունը, տղաքներ ու ծերեր, այրեր ու կիներ, և ամեն հասակի պատկանողներ, նույնիսկ աղջիկներ, բնիկներ և օտարներ, քրիստոնյաներ և ուրիշ տեղերե եկած ազգեր, ամենքն ալ աստվածատեսության սուրբ երկյուղով և ուրախությամբ համակված, սուրբ եկեղեցին վազելով, կարծես մեկ բերանով՝ Աստուծո սխրագործ Միածին Որդին կօրհնաբանէին: Ու այսպես, փորձառաբար և իրապես ապացուցվեցալ թե քրիստոնէից ամենաբարեպաշտ հավատքը, ոչ թե իմաստասիրական փաստերով՝ այլ նաև սուրբ հոգիին զորությամբն ու հայտնությամբը կրհաստատվի, ոչ միայն մարդոցմէ կպատվի, այլ նաև երկնքն՝ Աստուծմէ կվկայվի:

Արդ, որովհետև մենք երուսաղեմաբնակներս այդ սքանչելիքը ոչ թե ուրիշներեն լսեցինք այլ մեր աչքերովը տեսանք, Թագավորաց Թագավոր Աստուծո և իր Միածին Որդիին մատուցինք՝ պատշաճ կերպով՝ մեր շնորհակալության երկրպագությունը, և տա-

կալին պիտի մատուցանենք: Ձեր աստվածասեր թագավորության համար ևս սուրբ տեղաց մեջ հանդիսավոր աղոթքներ ըրինք և դեռ պիտի ընենք: Եվ որովհետև արժանի էր որ այս երկնային աստվածատեսության համար լռություն չպահեինք, և ավետիկնք զայն ձեր աստվածասեր բարեպաշտության, այս պատճառաւ փութացի ահա գրելու այս գիրս: Որպեսզի քու հառաջագույն արդեն ունեցած հավատքիդ հաստատուն և բարի հիման վրա—որ Աստուծմէ քեզի տրված գիտությունն է—Հիսուս Քրիստոսով ավելի հաստատուն կերպով շինված հույսն ալ ընդունելով՝ քաջալերվիս, և ամեն առաքինական սովորություններով տոգորված, խաչին հաղթության նշանը քեզի զորավիզ ունենաս՝ իբրև Աստված, և պարծանաց պարծանք համարիս զայն քեզի, քեզի հետ ունենալով երկինքը երևցած նշանը, որուն ձեռք մարդոց ցույց տված ատեն կարծես երկինք ինքն իսկ պանծաց:

Բայց պետք է գիտնալ, ո՛վ աստվածասեր թագավոր, թե այս հրաշքը մարգարէներեն նախագուշակված և ավետարաններուն մեջ ավանդված Հիսուսի սուրբ բառերովը արդեն նկարագրված իրողություն մըն է, որ այս անգամ կատարվեցալ, և անշուշտ ապագային ալ պիտի կատարվի հաճախ: Վասնզի, Փրկիչը, Մատթեոսյան Ավետարանին մեջ հանդերձալ իրաց գիտությունը իր երջանիկ աշակերտներուն պարզեած ատեն, անոնց և իրենց հետ եղողներուն խոսելով հայտնապես նախաձայնելով կըսեր. «Եւ յայնժամ երեւեցի նշան որդւոյ մարդոյ յերկինս»: Եթէ բանաս Ավետարանի աստվածային գիրքը, այնտեղ պիտի գտնես այս մասին առաջուց ըսված վկայությունները: Բայց սրբապաշտ կփափագիմ որ ամեն բանէ առաջ հոգեռանդն մտադրությամբ նայիս մեր Փրկչեն հառաջաձայնվածներուն մասին հոն գրվածներուն վրա. հակառակ ազդեցություններ չտարվելու համար, երկյուղած զգուշությամբ պետք է կարդալ զանոնք:

Այս իմ անդրանիկ նամակս, ո՛վ աստվածասեր թագավոր, Երուսաղեմեն քեզի դըրկելով, իբրև հարազատ և ամենաբարեպաշտ մտերիմի մը կխոսիմ քեզի, և իբրև մեզի հետ երկրպագողի Աստուծո Միածին Որդւոյն և մեր Փրկչին, որ, ըստ ավետարանական ավանդության, Երուսաղեմի մեջ կատարեց իր փրկության մատակարարությունը: Որ այստեղ ոտնակոխ ըրալ մահը, և իր պատվական արյունովը ջնջեց և սրբեց մարդոց մեղքը, և իբր Աստված, կյանք անապականություն և հոգևոր և երկնային շնորհք պարգևեց բոլոր իրեն հավատացողներուն:

Ամենաթագավոր Տերը, որ տվիչ է ամեն կերպ բարության, թող պահպանե գրեզ գործությամբ և շնորհով, և ա՛լ ավելի մեծամեծ բարեպաշտության գեղեցիկ գործերով, և զարդարե թագավորական հարազատ թագը՝ զավակներու բազմացումով, և, ի պարծանս քրիստոնեից և համայն աշխարհի, երկար և բազում տարիներու խաղաղությամբ պահե գրեզ ամբողջ ընտանիքով:

Եվ ամեն մասամբ զարդարելով գրեզ վարքով, եկեղեցիներու հանդեպ բաղքությամբ, և կայսերական իշխանության վայելուչ մարդասիրությամբ, և տառապարզ և բարեպաշտությամբ, երկարամյա անորորությամբ, ամենուն շնորհե զձեզ ամբողջ տունովդ հանդերձ, ո՛վ աստվածաւոր և օգոստախա թագավոր. ողջ լեր Աստուծով:

